ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« 16 » 07 2015 թ. N ԱՊ/ԱՀՍ-1-2/6281-15

Ձեր 09.07.2015 թ.
թիվ 252-5

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտում իրականացված դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ Ձեր հարցման առնչությամբ տեղեկացնում ենք, որ 2012-2014 թվականների ընթացքում իրականացվել են մի քանի տասնյակ ծրագրեր: Դրանք ուղղված են եղել տարբեր ենթաոլորտներում՝ մասնավորապես կենսաթոշակային ապահովության, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, ընտանիքի հիմնահարցերի, սոցիալական աջակցության, աշխատանքի և զբաղվածության ոլորտներում իրականացվող բարեփոխումների գործընթացների աջակցմանը: Ծրագրերն իրականացվել են տարբեր կազմակերպությունների աջակցությամբ, մասնավորապես՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն /USAID/, Համաշխարհային բանկ /WB/, Եվրոպական միության հանձնաժողով, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր /UNDP/, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ /UNFPA/, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ /UNICEF/, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով /UNECE/, Աշխատանքի միջազգային կազմակերպություն /ILO/, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ /UNHCR/, Միգրացիայի միջազգային կազմակերպություն /IOM/, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն /ICHD/, Վորլդ Վիժն /World Vision/, Սեյվ դը Չիլդրեն /Save the Children/:

Ծրագրերի շրջանակներում իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ՝ օրենսդրական բարեփոխումներ, կառուցակարգերի մշակում և ներդրում, փորձնական ծրագրերի իրականացում, կրթական և հանրային իրազեկման աշխատանքներ, միջազգային փորձի ուսումնասիրություն, կարողությունների հզորացում և այլն:

Ծրագրերն իրականացվել են միջազգային կազմակերպությունների կամ դրանց ծրագրային գրասենյակների կողմից, որոնք պատասխանատու են եղել ծրագրերի

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

կառավարման, ֆինանսական միջոցների տնօրինման, տեխնիկական հարցերի կարգավորման համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ուղղակի դրամաշնորհներ չի ստացել և չի տնօրինել ծրագրերի ֆինանսական միջոցները, ուստի չի տիրապետում դրամաշնորհների չափի վերաբերյալ տեղեկատվությանը:

Նախարարությունը սերտորեն համագործակցել է ոլորտում իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ ապահովելով ծրագրերի բովանդակային իրականացումը, դրանց համապատասխանությունը ոլորտում վարվող պետական քաղաքականության հետ, համակարգումը մյուս դոնորական ծրագրերի հետ՝ կրկնողությունները բացառելու և առկա ռեսուրսներն առավել նպատակային օգտագործելու նկատառումներով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության
և զարգացման ծրագրերի վարչություն /56 37 91